



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Գ Ե Ղ Ա Ր Ք Ո Ւ Ն Ի Ք Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

N 92 - Ա
14 մայիսի 2014 թ.

**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Գ Ե Ղ Ա Ր Ք Ո Ւ Ն Ի Ք Ի Մ Ա Ր Ձ Ո Ւ Մ
Ց Ո Ւ Ց Ա Դ Ր Ա Կ Ա Ն Հ Ա Տ Ո Ւ Կ Տ Ա Կ Տ Ի Կ Ա Կ Ա Ն Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Վ Ա Ր Ժ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Ն Ա Խ Ա Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ե Լ Ո Ւ Ե Վ Ա Ն Ց Կ Ա Ց Ն Ե Լ Ո Ւ Մ Ա Ս Ի Ն**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.22 կետերի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2014 թվականի հիմնական միջոցառումների պլանի համաձայն ս/թ հունիսի 24-ին Մարտունի քաղաքում անցկացնել «Որոնողափրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացում փլուզված շենքում» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարություն:

2. Ուսումնավարության ղեկավար նշանակել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Մ. Բարսեղյանին:

3. Ուսումնավարությունը նախապատրաստելու և անցկացնելու համար ստեղծել ուսումնավարության ղեկավարման շտաբ հետևյալ կազմով՝

- փ/ծ մայոր Հակոբյան Գ. - ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ պետի տեղակալ
բնակչության պաշտպանության բաժնի պետ, շտաբի պետ
- փ/ծ կապիտան Գորոյան Վ. - ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ ՃԿԿ հրահանգիչ,
շտաբի անդամ խաղարկման և վերլուծման գծով

4. Ուսումնավարության ղեկավարման շտաբում ստեղծել գործնական միջոցառումների կազմակերպման խումբ հետևյալ կազմով՝

- փ/ծ մայոր Առաքելյան Ա. - ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ ՃԿԿ ՕՀ ավագ
հրահանգիչ, խմբի պետ
- փ/ծ գնդապետ Մարգարյան Գ. - ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ Մարտունու
թիվ 34 ՀՓՁ հրամանատար
- փ/ծ մայոր Ալեքսանյան Ա. - ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ Մարտունու
թիվ 34 ՀՓՁ հրամանատարի տեղակալ
- փ/ծ ավագ լեյտենանտ Պետրոսյան Ա. - ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ ՃԿԿ ՕՀ
հրահանգիչ

5. Ուսումնավարժությանը ներգրավել ՀՀ մարզային փրկարարական վարչությանը, ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Մարտունու բաժինը, «Մարտունու ԲԿ» ՓԲԸ-ի աղետների բժշկության խումբը և Մարտունու ԳԳՄ վթարավերականգնողական խումբը:

6. Հաստատել ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը համաձայն հավելվածի:

7. Ուսումնավարժության ղեկավար փ/ծ գնդապետ Մ. Բարսեղյանին՝

1) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավված ուժերի նախապատրաստումը՝ համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի, ապահովել ուսումնավարժության պատշաճ անցկացումը.

2) կազմակերպել համագործակցությունն ուսումնավարժությանը ներգրավված ուժերի միջև.

3) ուսումնավարժության անցկացումից հետո՝ հնգօրյա ժամկետում, ինձ ներկայացնել անցկացման վերաբերյալ ամփոփագիր:

8. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան պլանները, մասնակից ուժերը հնարավորինս համալրել անձնակազմով և գույքով.

2) պատրաստ լինել ուսումնավարժության ընթացքում համապատասխան գործողությունների իրականացմանը.

3) գործնական միջոցառումներ իրականացնելիս խստագույնս պահպանել անվտանգության կանոնները:

9. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանին:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝



Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք. Գավառ